

## **Մարզի երեք բուժաշխատողներ խրախուսվեցին ՀՀ Առողջապահության նախարարի պատվոգրով**

01.07.2016

Բուժաշխատողի օրվա առթիվ ՀՀ Առողջապահության նախարարի խրախուսանքին արժանանալու նպատակով Գեղարքունիքի մարզից երաշխավորվել էին Գավառի բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկ Տիգրան Մարգարյանը, Մարտունու բժշկական կենտրոնի քիթ-կոկորդ, ականջաբան Հասմիկ Աբգարյանը և Վարդենիսի պոլիկլինիկայի բուժքույր Էմմա Մկրտչյանը: Առողջապահության նախարարի կողմից շնորհված պատվոգրերը բուժաշխատողներին հանձնեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Մարզպետը շնորհավորեց նրանց խրախուսանքի արժանանալու համար և շնորհակալություն հայտնեց իրենց առջև դրված պարտականությունները լավագույնս կատարելու համար: „ Առողջապահության համակարգը գտնվում է երկրի Նախագահի անմիջական ուշադրության ներքո: Դրա վկայությունն է նաև վերջին տարիներին Գեղարքունիքի մարզի առողջապահական հիմնարկների աստիճանական բարելավումը և վերազինումը: Դուք այդ բարելավմանը նպաստում եք ձեր հայրենանվեր աշխատանքով, ինչի համար վայելում եք հասարակության վստահությունը, իսկ մեր կողմից արժանանում գնահատանքի: Աշխատեք առաջ գնալ և ավելի բարելավել բուժապասարկման որակը մարզում „- նշեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Պարգևատրվածները շնորհակալություն հայտնեցին իրենց կողմից առողջապահության համակարգում կատարած աշխատանքները գնահատելու և պարգևի արժանացնելու համար, նշելով, որ նման խրախուսանքները աշխատանքում պարտավորեցնող դեր ունեն: